ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՍԱԴՈՒՆՑԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 5

ՀՀ Արագածոտնի մարզ գ.Սադունց
19 մարտի 2014թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Ս. Սահակյանին

Ձեզ ենք ուղարկում Արագածոտնի մարզի Սադունցի գյուղական համայնքի ավագանու որոշումը, որը բաղկացած է 2 էջից:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ս. Մուրազյան

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության ընդհանուր բաժին
Ելք
«19» 03 2014թ.
Մուտք № 7/1489-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ՍԱԴՈՒՆՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մարտի 2014 թվականի N5

Սադունց գյուղական համայնքի 2013թ. Բյուջեի կատարման վերաբերյալ Սադունց գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվության մասին

/զեկ. Ս. Մուրազյան/

Հայաստանի հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 69-րդ և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35- րդ հոդվածների պահանջներին համապատասխան՝

Սադունց գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ Սադունց գյուղական համայնքի 2013թ. բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությանը՝ համաձայն հավելվածի:

2.Գյուղապետ պարոն Է. Սադունյանին՝

ա) ավելի զարգացնել ձեռքբերումները, հետևողականորեն իրականացնել գյուղի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցառումները:

բ) ակտիվացնել աշխատանքները հողի և գույքի հարկերի բազաների ճշտման, տեղական հարկերի հավաքագրման աշխատանքներում հրապարակայնություն և թափանցիկություն ապահովելու, աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու ուղղությամբ:

գ) լիարժեքորեն կիրառել համայնքի ղեկավարին օրենքով տրված լիազորությունները՝ հարկերի վճարումից խուսափողներից գանձումները օրենքով սահմանված կարգով կատարելու համար:

դ) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել 2014թ. բյուջեի պարտադիր կատարման ապահովելու համար:

Ավագանի՝ Կողմ(5) Դեմ (0) Ձեռնպահ(0)

1.Յու. Ռազգոն
2.Ջ. Մուրազյան
3.Յ. Սաֆարյան
4.Մ. Կալոյան
5.Ք. Սադունյան

Սադունց համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ս.Մուրազյան

Հավելված

Սադունց գյուղական համայնքի 2013թ. բյուջեի կատարման վերաբերյալ սադունց գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվությունը

Սադունց գյուղական 2013թ. գործունեությանը նպատակաուղղված է եղել համայնքի 2013թ. բյուջեի ամբողջական կատարումն ապահովելու և դրա շնորհիվ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղություններում բնականոն գործունեության և բնակչության խնդիրների ու հոգսերի լուծման նկատմամբ սրտացավ ու հետևողական մոտեցման ապահովումը:

Ապահովել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ցուցադրական վահանակների միջոցով:

Սադունցի գյուղական համայնքում 2013թ. ընթացքում կայացել 7 համայնքի ավագանու նիստ, ընդունվել է 8 որոշումներ:

Ամենօրյա հետևողական աշխատաքներ են տարվել հողերի և գույքի բազանների ճշգրտման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման ուղղությամբ:

Համայնքի 2013թ. բյուջեն պլանավորել է հետևյալ ցուցանիշներով՝

ՀՀ դրամ

եկամտատեսակներ		
Հողի հարկ և վաճավճար	2852.7	
Գույքահարկ փոխադրամիջոցներից	215.4	
Տեղ. Տուրք և տեղ. վճար	79.0	
ՀՀ կառ. Կողմից տրված դոտացիա	3798.1	
Ընդամենը վարչ. Բյուջեի եկամուտներ	6945.2	
Տարեկասն ազատ մնացորդ	476.8	
Ընդամենը համայնքի բյուջե	7422.0	